**Ուղղությունը. Տնտեսագիտություն, բակալավրիատ, հեռակա ուսուցում**

**Առարկա Б1.Б7. Միկրոէկոնոմիկա**

<u>Անոտացիա</u>

**Աշխատատարությունը՝** *12 կրեդիտ, 432 ակադեմիական ժամ*

**Քննություն**

*Համառոտ նկարագրություն*. Դասախոսությունների ընթացքում քննարկվում են հարցեր կապված միկրոէկոնոմիկայի տեսական հիմքերի հետ, իսկ գործնական պարապմունքների շրջանակում լուծվում են մի շարք խնդիրներ, իրականացվում է խաչաձև հարցումներ, միջանկյալ թեստավորում, ինչպես նաև քննական հարցերի նախապատրաստում: Դասապատրաստման ընթացքում ուսանողները հաստատված գրականության միջոցով ընկալում և ամրապնդում են հիմնական հասկացությունները, ինչպես նաև լրացուցիչ գրականության միջոցով բավարարում են իրենց հետաքրքրությունները: Ուսանողները ստանում են լրացուցիչ օգնություն ինքնուրույն նյութը սովորելու համար, ինչպես նաև անցկացվում է լրացուցիչ բացատրական աշխատանք դժվարամատչելի նյութը յուրացնելու համար:

Դասընթացի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել տնտեսագիտական մտածողության հիմքերը, տրամադրել միկրոտնտեսագիտական հասկացությունների և մոդելների բնութագիրը, օգտագործել ստացված գիտելիքները գործնական կյանքում կոնկրետ խնդիրներ լուծելիս: Դասընթացն ուսումնասիրելուց հետո ուսանողների մոտ կձևավորվի նաև միկրոտնտեսագիտական վերլուծություններ կատարելու հմտություններ:

*Կապը ուսումնական պլանի այլ առարկաների հետ.* Միկրոէկոնոմիկա առարկան հանդիսանում է հիմնական մասնագիտական դասընթաց և սերտորեն փոխկապակցված է ուսումնական ծրագրի մյուս առարկաների հետ: